Սահմանադրություն

Կուր-Դաշնակցական

1918

342
И-15

323.1
С-15

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

05 FEB 2010

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ՀԱՅ ՀԱՄԱՆՔԻ

1918.

# СТАТУТЪ

## НАХИЧЕВАНСКОЙ НА ДОНУ

## Армянской Общины.

342
Ч-15

Нахичевань н-Д.
пар. тип. С. Я. Авакова.
1918.

342
Ա-15

300
1598-ՍԱ

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

*(Հաստատուած 1918 թ. օգոստոսի 11-ին)*

— –

1. Նախիջևանում, Ռոստովում և Ս. Խաչ աւանում ապրող հայերը իրանց անդամների կուլտուրական կեանքը կառավարելու համար կազմում են Նոր-Նախիջևանի Հայկական Համայնք։

2. Համայնքի անդամ է համարւում Նախիջևանում, Ռոստովում և Ս. Խաչ աւանում ապրող ամեն մի հայ, որ յատուկ յայտարարութեամբ չի մերժել իւր հայ լինելը և կամ ցանկութիւն չի յայտնել դուրս գալ սոյն Համայնքից։

3. Քսանմէկ տարին լրացրած ամեն մի անդամ ձեռք է բերում ընտրելու և ընտրուելու իրաւունք։

25 JUL 2013



4. Համայնքի բոլոր անդամների համար կազմւում ու պահւում են յատուկ մատեաններ։

## ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

5. Համայնքը վարում, տնօրում և գործում է ի դէմս Համայնական Խորհրդի՝ բաղկացած 60 պատգամաւորներից։

6. Համայնական Խորհրդի լիազօրութիւնը տևում է երեք տարի։

7. Համայնական Խորհրդի պատգամաւորների ընտրութիւնը կատարւում է գաղտնի քուէարկութեամբ, որին մասնակցում են Համայնքի 21 տարին լրացրած ու 4 յօդ. յիշատակուած յատուկ մատեաններում արձանագրուած անդամները, առանց սեռի խտրութեան։ Բացի 60 պատգամաւորներից ընտրւում են նաև 10 անձնափոխանորդներ։

8. Համայնական Խորհրդի նիստերը տեղի են ունենում Նոր-Նախիջևանում։ Խորհուրդն ունի կնիք իր անուամբ։

9. Համայնական Խորհուրդն ունի իր



նախագահութիւնը՝ բաղկացած նախագահից, երկու փոխ նախագահներից և երկու քարտուղարներից՝ ընտրուած մէկ տարով։

10. Նախագահութիւնը վարում է Խորհրդի նիստերը։

11. Համայնական Խորհուրդը որոշում է Համայնքի օգտին՝ Համայնքի իւրաքանչիւր անդամից հաւաքելի տուրք-վճարումների չափը, հրատարակելով այդ մասին առանձին պարտադիր կանոններ։

12. Համայնական Խորհուրդը խնամում և հոգում է. ա) հայերի լուսաւորութեան, բ) խնամատարութեան, գ) տնտեսական զարգացման, դ) տեղական հայկական կուլտուրական-կրթական և բարեգործական հաստատութիւնների և ե) հայ մամուլի վերաբերեալ խնդիրներ։

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

13. Համայնքի միջոցները կազմում են. 1) Նրա բոլոր անդամների պարտադիր տուրք-վճարումները, 2) կտակուած շարժական և անշարժ կայքերն ու նուիրատուութիւնները,

3) պետութիւնից, քաղաքներից և հասարակական կազմակերպութիւններից ստացուող նպաստներ։

## ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

14. Համայնքի գործադիր մարմինն է Ազգային Համայնական Վարչութիւնը։

15. Վարչութիւնը կազմուած է երեք անդամներից, որոնց ընտրում է Համայնական Խորհուրդը Համայնքի 25 տարին լրացրած անդամներից երեք տարի ժամանակով. Վարչութեան անդամների ծառայութեան ժամանակը, յամենայն դէպս, լրանում է Վարչութիւն ընտրող Խորհրդի լիազօրութեան ժամանակաշրջանի լրացմամբ։

16. Վարչութեան մէջ նախագահում է նրա անդամներից մէկը՝ Համայնական Խորհրդի որոշմամբ և ընտրութեամբ։

17. Ի դէմս Վարչութեան, իբրև գործադիր մարմնի, Նոր-Նախիջևանի Համայնքը, որպէս մի իրաւական անձն, իրականացնում է իւր բոլոր սեփականատիրական և քաղաքացիական իրաւունքները, ձեռք է բերում



շարժական և անշարժ կայքեր, վաճառում, (отчужденіе) պայմաններ է կապում, իրաւաբանական պաշտպանութեամբ օգտւում և այլն։

18. Վարչութեան պարտականութիւնն է. ա) Համայնքի անդամների ցուցակագրութիւնը բ) Խորհրդի բոլոր որոշումների գործադրութիւնը, գ. Խորհրդի իրաւասութեանն ենթակայ խնդիրների մասին Խորհրդին զեկուցումներ և նախագծեր ներկայացնել, դ) Վարձել ծառայողներ Խորհրդի մշակած շտատի համաձայն, ե) գանձել և պահել Համայնքին պատկանած գումարները, զ) հաւատարմաթղթեր և լիազօրութիւններ տալ Համայնքի սեփականատիրական և քաղաքացիական շահերը պաշտպանելու համար։

19 Վարչութեան կից հաստատւում են Համայնական Խորհրդից ընտրուած նախապատրաստական յանձնաժողովներ՝ համաձայն Խորհրդի իրաւասութեան ենթակայ բոլոր գործերի. յանձնաժողովները ղեկավարւում են Խորհրդի տուած առանձին հրահանգներով և նակազներով։

## ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

20. Համայնական Խորհրդի նիստը օրինական է համարւում, եթէ ներկայ է պատգամաւորների կէսը։

21. Բոլոր հարցերը վճռւում են ձայների հասարակ մեծամասնութեամբ և բաց քուէարկութեամբ, բացի այն դէպքերից, երբ երեք պատգամաւոր պահանջէն գաղտնի քուէարկութիւն։ Գաղտնի քուէարկութեամբ է վճռւում նոյնպէս և Համայնքի անդամութիւնից հեռացնելու հարցը ըստ որում վճռի կանոնաւորութեան համար անհրաժեշտ է ուժեղացրած մեծամասնութիւն, այն է ժողովին ներկայ եղող պատգամաւորների երկու երրորդի համաձայնութիւնը։

22. Համայնքից հեռացնելու առիթներ են. 1) դատաստանական վճռով դատապարտումն այնպիսի քրէական յանցանքների համար, որին ուղեկցում է իրաւունքների սահմանափակում, 2) ակնյայտնի արհամարանք դէպի Համայնքը։

23. Խորհրդի նիստերն արձանագրւում



են առանձին մատեաններում, որ կարդացւում և ընդունւում են ու վաւերացւում նախագահի և քարտուղարներից մէկի ստորագրութեամբ։

## ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱԿՈՒՄԸ։

24. Մի որև է պատճառով Համայնական գործերի լուծման դէպքերում նրա բոլոր միջոցները ընդհանուր ժողովի որոշմամբ յատկացւում են հայերի կուլտուրական գործերին և տրւում այն հաստատութեան, որի ձեռին են այդ գործերը։

№ 142

Սոյն մակագրութիւնը տրւած է Ռոստովի Դ-վ. Շրջանային Դատարանի կողմից, ռէգիստրասիոնի բաժանմունքում այն մասին, որ Դատարանի որոշմամբ 1918 թւականի օգոստոս 11-ից Նոր-Նախիջևանի Հայ Համայնքը անցրւած է ոչ շահագիտական նպատակ ունեցող ընկերութիւնների և միութիւնների ռէեստրի առաջին մասում։

НАХИЧЕВАНСКАЯ
НА ДОНУ

# Армянская Община

1. Армяне, населяющіе гг. Нахичевань, Ростовъ и Крестовоздвиженскій поселокъ съ цѣлью управленія культурной жизни своихъ членовъ образуютъ Нахичеванскую на Дону Армянскую Общину.

2. Членомъ Общины является каждый армянинъ, проживающій въ гг. Нахичевани, Ростовѣ и Крестовоздвиженскомъ поселкѣ, который особымъ заявленіемъ не отвергъ своей принадлежности къ армянской національности или не пожелалъ выйти изъ этой Общины.

3. По достиженіи 21 года каждый членъ пріобрѣтаетъ активное и пассивное избирательное право.

4. Всѣмъ членамъ Общины ведутся особые списки.



## Общинный совѣтъ

5. Община управляетъ, распоряжается и дѣйствуетъ въ лицѣ особаго Общиннаго Совѣта, состоящаго изъ шестидесяти членовъ.

6. Срокъ полномочій Общиннаго Совѣта три года.

7. Члены Общиннаго Совѣта выбираются закрытой баллотировкой всѣми членами внесенными въ списки, указанные въ § 4 и достигшими 21-лѣтняго возраста безъ различія пола. Кромѣ 60 членовъ выбираются къ нимъ 10 кандидатовъ.

8. Общинный Совѣтъ засѣдаетъ въ гор. Нахичевани на Дону, имѣетъ свою печать съ своимъ наименованіемъ.

9. Общинный Совѣтъ имѣетъ свой президіумъ, состоящій изъ предсѣдателя, двухъ товарищей предсѣдателя и двухъ секретарей, избираемый на одинъ годъ.

10. Президіумъ ведетъ засѣданія Совѣта.

11. Общинный Совѣтъ опредѣляетъ размѣръ обязательныхъ взносовъ—платежей отъ каждаго члена Общины въ пользу послѣдней, издавая о семъ обязательныя постановленія

12. Общинный Совѣтъ имѣетъ попеченіе и заботы о: а) просвѣщеніи армянъ б) призрѣніи ихъ в) экономическомъ ихъ развитіи г) мѣстныхъ армянскихъ культурныхъ, просвѣтительныхъ и благотворительныхъ учрежденіяхъ и д) армянской прессѣ.

### Средства Общины

13. Средства Общины составляютъ: 1) обязательные взносы—платежи всѣхъ ея членовъ, 2) завѣщанные недвижимыя и движимыя имущества и пожертвованія и 3) пособія государства, городовъ и общественныхъ организацій.

### Исполнительные Органы Общины

14. Исполнительнымъ органомъ Общины является Національная Общинная Управа.

15. Управа состоитъ изъ трехъ членовъ, избираемыхъ Совѣтомъ изъ членовъ Общины, достигшихъ 25-ти лѣтняго возраста, на три года, но во всякомъ случаѣ срокъ службы членовъ Управы кончается съ окончаніемъ полномочій Совѣта ихъ избравшаго.

16. Въ Управѣ предсѣдательствуетъ одинъ изъ ея членовъ по выбору и опредѣленію Общиннаго Совѣта.



17. Въ лицѣ Управы, какъ исполнительнаго своего органа, Нахичеванская на Дону Армянская Община, какъ юридическое лицо, осуществляетъ всѣ свои имущественныя и гражданскія права, пріобрѣтаетъ движимое, недвижимое имущество, отчуждаетъ, вступаетъ въ договорныя отношенія, пользуется юридической защитой и проч.

18. На Управу возлагается: а) веденіе списковъ членовъ Общины (§ 4, б) приведеніе въ исполненіе всѣхъ постановленій Совѣта, в) представленіе Совѣту докладовъ и предположеній по предметамъ вѣдомства Совѣта, г) приглашеніе служащихъ по выработанному Совѣтомъ штату, д) собираніе и храненіе суммъ, принадлежащихъ Общинѣ, е) выдача довѣренностей и полномочій для защиты имущественныхъ и гражданскихъ интересовъ Общины.

19. При Управѣ состоятъ избранныя Общиннымъ Совѣтомъ подготовительныя комиссіи по всѣмъ отраслямъ управленія Совѣта, дѣйствующія на основаніи особыхъ инструкцій и наказовъ Совѣта.

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Порядокъ обсужденія вопросовъ въ Общинномъ Совѣтѣ

20. Засѣданіе Общиннаго Совѣта считается законнымъ при наличности половины всѣхъ его членовъ.

21. Всѣ вопросы разрѣшаются простымъ большинствомъ голосовъ и открытой баллотировкой, за исключеніемъ тѣхъ случаевъ, когда три члена потребуютъ закрытой баллотировки. Равнымъ образомъ вопросъ объ исключеніи членовъ изъ Общины разрѣшается только закрытой баллотировкой, при чемъ для законности рѣшенія необходимо квалифицированное большинство, а именно, двухъ третей наличныхъ членовъ Собранія.

22. Поводами исключенія изъ Общины служатъ: 1) осужденіе судебнымъ приговоромъ по уголовному дѣлу, сопряженное съ ограниченіемъ правъ, 2) явное пренебреженіе къ общинѣ.

23 Засѣданіемъ Совѣта ведутся особые журналы, оглашенные и принятые имъ и скрѣпляемые подписями предсѣдателя и одного изъ секретарей.



## Ликвидація Общины.

24. При ликвидаціи дѣлъ Общины по какой либо причинѣ всѣ ея средства по постановленію Общиннаго Совѣта опредѣляется на культурныя дѣла армянъ и передаются тому учрежденію, которое таковыми вѣдаетъ.

№ 142

Настоящая надпись учинена Ростовскимъ на Дону Окружнымъ Судомъ, по регистраціонному Отдѣлу, въ томъ, что опредѣленіемъ Суда отъ 11-го августа 1918 года Нахичеванская на Дону Армянская Община внесена въ I-часть реестра обществъ и союзовъ, не имѣющихъ своею цѣлью извлеченіе прибыли.

ՀՀ Ազգային գրադարան
NL0215008

34.603